

Հասմիկ Հակոբյան
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության
պատմության և գրականության տեսության
ամբիոնի ասպիրանտ,
hasmikhakobyan1@gmail.com
ORCID ID: 0009-0007-2616-6761
DOI: 10.54503/1829-0116-2026.1-91

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄԵՏԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ «ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ» ՎԵՊՈՒՄ*

***Բանալի բառեր** – Վահագն Գրիգորյան, Լինդա Հաթչոն, հետմոդեռնիզմ,
պատմագրական մետագեղարվեստականություն, միջտեքստայնություն, պատ-
մություն, մետապատմավեպ:*

Հայոց պատմական անցյալի և ներկայի քննության, արժևորման, վերաիմաս-
տավորման թեման մշտարդի է և կարևոր տեղ է զբաղեցրել ու զբաղեցնում հայ
գրականության մեջ: Ի տարբերություն դասական պատմագրության՝ պատմական
թեմատիկայով ժամանակակից գրականությունը ոչ թե պարզապես պատմություն
է պատմության մասին, այլ քննական անդրադարձ է պատմությանը և պատմագ-
րությանը, որի նպատակը պատմությանը վերլուծաբար ու քննադատաբար մոտե-
նալն է՝ նոր ճշմարտություններ և ներկայի ու ապագայի բանալիներ որոնելու
նպատակով: Նմանատիպ գործերից է Վ. Գրիգորյանի «Պողոս-Պետրոս» վեպը, որը
պետք է քննենք՝ առանցքում ունենալով հետմոդեռնիստական, մասնավորապես
Լինդա Հաթչոնի առաջ քաշած պատմագրական մետագեղարվեստականության
տեսության սկզբունքները, ժամանակակցի ընկալման տեսանկյունից պատմական
անցյալի ներկայացման միտումները: Լինդա Հաթչոնի «պատմագրական մետագե-
ղարվեստականության» տեսության հիմքում ընկած է այն գաղափարը, որ պատ-
մագրական գեղարվեստական տեքստերը ոչ միայն պատմական իրադարձու-
թյունների վերարտադրություն են, այլև ինքնավերլուծության, ինքնության և պատ-
մության վերաիմաստավորման գործընթացներ, որտեղ մետագրականության
(տեքստի ինքնագիտակցության) տարրերը կարևոր դեր են խաղում: Այս տեսու-
թյան շրջանակում «Պողոս-Պետրոս»-ը դիտարկվում է որպես պատմական անցյալի
գեղարվեստական վերարտադրման մի ձև, որը զուգահեռորեն քննադատում, վե-
րաիմաստավորում և խճողում է պատմական նարատիվները: Վեպի շարադրանքն
ինքնին բազմաշերտ ու բազմատարր է. վիպական տարածքում հեղինակը համա-
տեղել է դասական պատմագրությանը բնորոշ հատվածներ, իսկ երբեմն էլ շարադ-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 25.12.2025 թ.:
Ուղարկվել է գրախոսության 27.02.2026 թ.:

բանքը ստանում է մոդեռնիստական ու հետմոդեռնիստական (հեգնանք, միջտեքստայնություն, պարոդիա) տեքստին բնորոշ հատկանիշներ:

Hasmik Hakobyan

*PhD student of the Chair of History and Literary Theory of
Armenian Literature named after Acad. Hr. Tamrazyan,
YSU*

hasmikhakobyan1@gmail.com

ORCID ID: 0009-0007-2616-6761

HISTORIOGRAPHIC METAFICTION IN VAHAGN GRIGORYAN'S NOVEL "POGHOS-PETROS"

Keywords: *Vahagn Grigoryan, Linda Hutcheon, postmodernism, historiographic metafiction, intertextuality, history, metahistorical novel.*

The theme of examining, evaluating, and reinterpreting Armenian history and the present is a constant and has played and continues to play an important role in Armenian literature. Unlike classical historiography, contemporary literature with historical themes is not simply a story about history, but a critical reflection on history and historiography, the purpose of which is to approach history analytically and critically in order to search for new truths and keys to the present and future. One of such works is V. Grigoryan's novel "Poghos-Petros", which we should examine, focusing on the principles of postmodernism, in particular the theory of historiographic metafiction put forward by Linda Hutcheon, the tendencies of presenting the historical past from the perspective of contemporary perception. Linda Hutcheon's theory of "historical metafiction" is based on the idea that historical fiction texts are not only reproductions of historical events, but also processes of self-reflection, identity, and reinterpretation of history, in which elements of metafiction (the self-awareness of the text) play an important role. Within the framework of this theory, "Poghos-Petros" is viewed as a form of artistic reproduction of the historical past, which simultaneously criticizes, reinterprets and entangles historical narratives. The narrative of the novel itself is multilayered and multifaceted: In the novel's space, the author has combined elements typical of classical historiography, and sometimes the narrative acquires features typical of modernist and postmodernist texts (irony, intertextuality, parody).

Асмик Акопян

*Аспирант кафедры истории и литературной теории
армянской литературы имени акад. Гр. Тамразяна,
ЕГУ*

hasmikhakobyan1@gmail.com

ORCID ID: 0009-0007-2616-6761

ИСТОРИОГРАФИЧЕСКАЯ МЕТАФИКЦИЯ В РОМАНЕ ВААГНА ГРИГОРЯНА «ПОГОС-ПЕТРОС»

Ключевые слова: *Ваагн Григорян, Линда Хатчеон, постмодернизм, историографическая метафигция, интертекстуальность, история, метаисторический роман.*

Тема исследования, оценки и переосмысления армянской истории и современности является постоянной и играла и продолжает играть важную роль в армянской литературе. В отличие от классической историографии, современная литература на историческую тематику — это не просто рассказ об истории, а критическое осмысление истории и историографии, цель которого — аналитически-критический подход к истории для поиска новых истин и ключей к настоящему и будущему. Одним из таких произведений является роман В. Григоряна «Погос-Петрос», который следует рассмотреть, сосредоточившись на принципах постмодернизма, в частности на теории историографической метапрозы Линды Хатчеон, тенденциях представления исторического прошлого с точки зрения современного восприятия. Теория «историографической метапрозы» Линды Хатчеон основана на идее о том, что тексты исторической прозы представляют собой не только воспроизведение исторических событий, но и процессы саморефлексии, идентичности и переосмысления истории, в которых важную роль играют элементы метапрозы (самосознания текста). В рамках этой теории «Погос-Петрос» рассматривается как форма художественного воспроизведения исторического прошлого, которая одновременно критикует, переосмысливает и переплетает исторические нарративы. Само повествование романа многослойно и многогранно: в пространстве романа автор сочетает элементы, характерные для классической историографии, а порой повествование приобретает черты, свойственные модернистским и постмодернистским текстам (ирония, интертекстуальность, пародия).

Ներածություն

«Պողոս-Պետրոս» վեպը Վ. Գրիգորյանը սկսել է գրել արցախյան շարժմանը հաջորդած ժամանակաշրջանում՝ 1993 թ.՝ դրա վրա աշխատելով շուրջ 18 տարի: Այն վերջնական տեսքի է բերվել 2018 թ.: Վեպի իրադարձություններն սկսվում են XIX դարից՝ 1828 թվականի Երևանի բերդի գրավումից, և շարունակվում մինչև մեր օրեր՝ ներկայացնելով հայ-ռուսական հարաբերությունների 200-ամյա պատմությունը: Վեպն ունի առաջաբան՝ «Նախաբան. Ցավոք, ոչ լավատեսական» վերնագրով, հինգ կանգառ՝ «Կանգառ առաջին. Վարք Աբգարդպիր վարդապետի», «Կանգառ երկրորդ. Հանուն բոլոր ճնշվածների ու հալածվածների», «Կանգառ երրորդ. Խորհրդավոր ընթրիք», «Կանգառ չորրորդ. Լույսը բացվի, բարին հետը», «Կանգառ հինգերորդ. Տե՛ր, դու մեզ փրկիր բարեկամից», ինչպես նաև վերջաբան՝ «Վերջաբան. Ինչպես մեզ փրկենք մեզնից» վերնագրով:

Վեպին մեզ հայտնի արձագանքներն են Երվանդ Տեր-Խաչատրյանի (Տեր-Խաչատրյան, 2020) և Կարինե Ռաֆայելյանի (Ռաֆայելյան, 2020) հոդվածները: Կարինե Ռաֆայելյանը «Տեղապտույտ՝ ելքի հեռանկարով Վահագն Գրիգորյանի «Պողոս-Պետրոս» վեպի մասին» հոդվածում անդրադարձել է վեպի գաղափարական առանցքին՝ կարևորելով դրա լավատեսական վերջաբանը: Հատկանշական է, որ Տեր-Խաչատրյանը, ժանրային

քննության ենթարկելով վեպը, շեշտել է դրա երկակիությունը. «Վեպի բնույթը դժվար է հստակորեն գատորոշել. այն և՛ պատմական, և՛ միևնույն ժամանակ, արդիական վեպ է: Վեպի առաջին մասերում բազմաթիվ են պատմական իրողությունները, իրականություններն ու իրադարձությունները: Մանավանդ՝ պատմական է ժամանակը: Եվ այնուամենայնիվ այս վեպը պատմական վեպ չէ, պատմավեպ չէ» (Տեր-Խաչատրյան, 2020): Հենց այս երկակիությունն է մետապատմավեպի հիմնական առանձնահատկությունը, որին մենք անդրադառնալու ենք սույն հոդվածում՝ հենվելով պատմագրական մետագեղարվեստականության տեսության վրա, որը մետապատմավեպի, պատմությունն ու գեղարվեստական գրականությունը համատեղող վեպի քննության արդյունավետ միջոց է և բացահայտում է պատմությունը՝ որպես կառուցված պատում, այլ ոչ թե բացարձակ ճշմարտություն:

Հոդվածը կառուցված է ֆենոմենոլոգիայի, սոցիոլոգիայի և պոետիկայի գիտական հարացույցների երկխոսության սկզբունքի հիման վրա (Տուրիշևա, 2017): Ֆենոմենոլոգիական հերմենևտիկական բացահայտում է պատմելու գործընթացի և պատմության ընկալման տարբեր ձևերը, սոցիոլոգիական հարացույցը՝ արտատեքստային իրականության հետ տեքստի հարաբերությունը: Պոետիկական բացահայտում է ստեղծագործության ներքին կառուցվածքի յուրահատկությունները, որոնց շնորհիվ այն ունի գեղարվեստական այս կամ այն ներգործությունը:

«Պոդոս-Պետրոս» վեպը հարուստ է պատմագրական մետագեղարվեստականությամբ¹ բնորոշ *միջտեքստայնությամբ*, որը ստեղծում է բազմաձայնություն և դառնում է իշխանական, քաղաքական գաղափարախոսություններ բացահայտելու գործիք: Տեսաբան Առնոլդը միջտեքստայնության քննության մեջ մեծ կարևորություն է տալիս ինտերտեքստի տեղակայմանը: Ըստ նրա՝ եթե մեջբերումը կամ ակնարկը ներառված է ստեղծագործության վերնագրում կամ ծառայում է որպես բնաբան, ապա միջտեքստի իմաստային բեռը այս դեպքում շատ ավելի բարձր է, քան այն դեպքերում, երբ միջտեքստային միջոցները հանդիպում են սյուժեի զարգացման ընթացքում (Առնոլդ, 2014: 415–416): Այս դեպքում մենք գործ ունենք և՛ վերնագրում («Պոդոս-Պետրոս»), և՛ բնաբանում («Պոդոս, գըտա՛ր: //-Չէ՛ է՛: //Պետրոս, գըտա՛ր: //-Չէ՛ է՛») տեղակայված ինտերտեքստի հետ:

Ըստ Աստվածաշնչի՝ Պոդոսը և Պետրոսը առաքյալներ են: Նրանց անունով եկեղեցիներ են կառուցվել նաև Հայաստանի տարբեր վայրերում,

¹ Տե՛ս **Hutcheon L.** (1989): “Historiographic Metafiction Parody and the Intertextuality of History” *Intertextuality and Contemporary American Fiction*. Ed. O'Donnell, P., and Robert Con Davis. Baltimore: Johns Hopkins University Press. (pp. 3-32):

որոնցից ամենահինը 5-6-րդ դարերի կառույց է համարվում և քանդվել է այլ շինությամբ փոխարինվելու համար:

Բանահյուսության մեջ Պողոս-Պետրոսը փակուղային իրավիճակում հայտնված երկու եղբայրների պատմությունն է, որոնք փորձում են իրար ձայնելով դուրս գալ դժվար իրավիճակից: Այս պատմությունը Շուկավերում Թումանյանին պատմել է Բաղդասար Միրզոյանը: Այդ մասին վկայում է Բաղդասարի եղբայրը՝ Մովսես Միրզոյանը, 1936 թ. մարտի 23-ին Նվարդ Թումանյանին հղած նամակում: Պատմությունը վերածվել է բալլադի և տպագրվել 1898 թ. (Թումանյան, 1988: 556):

Վ. Գրիգորյանի վեպում բազմավեկտոր հղումներ կան Պողոս-Պետրոսի և նաև աստվածաշնչյան, և՛ բանահյուսական նարատիվներին: Հղումը Թումանյանի բալլադին, այն է՝ ազգային հիշողությանը, ստեղծում է պատմական հիշողության և մշակութային հետահայացության միջոցով կառուցվող իրականություն, որը միաժամանակ ունի և՛ պատմագրական, և՛ գեղարվեստական շերտեր: «Պողոս, գտա՛ր...» մոտիվը վերածվում է հետգաղութային, պատմաքաղաքական ակնարկի՝ փոխանցելով պատմության կրկնության և փակ շրջան լինելու, ազգային որոնումների և մասնատված հիշողության գուգորդումներ: Պատմությունը «կրկնվում» է ոչ թե փաստային հավաստիությամբ, այլ նշանների միջոցով, որոնք խզվել են իրենց նախնական համատեքստից: Աստվածաշնչյան առաքյալների անունով կառուցված եկեղեցու քանդումը վեպում «Պանդորայի արկղի» դեր է ստանում՝ հերոսներին մղելով ինքնավերլուծության, ազգային գիտակցության արթնության դաշտ: Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու քանդելն ու տեղում «Մոսկվա» կինոթատրոնի կառուցվելը խորհրդանշական խզում է, որ արձանագրում է անցյալի սրբության նահանջը՝ ի նպաստ գաղափարական նոր արժեհամակարգի: Հիշողության այս ճակատում տեղի է ունենում նաև Մովսեսի վարքի վերագնահատումը կնոջ ու ժառանգների կողմից. «Մովսեսը շատ պայքարեց, որ Պողոս-Պետրոս եկեղեցին քանդվի, տեղը կինոթատրոն կառուցվի»: (Գրիգորյան, 2019: 365): Սակայն հաջորդում է Պողոսի քննադատական արտահայտությունը. «Որպեսզի միայն մի անգամ անցնի շեմը» (Գրիգորյան, 2019: 366): Հատկանշական է, որ խորհրդային գաղափարներին ծառայելու համար կառուցված շենքը տարիներ անց դառնում է հենց այդ գաղափարների քայքայման վայր, ինչպես հերոսներն են ասում՝ ուխտատեղի: Կինոթատրոնն աստիճանաբար հռչակվում է իբրև սրբավայր՝ Երուսաղեմ, որտեղ «կոփվում և թրծվում էին» խորհրդային քաղաքացիները՝ նախ խորհրդային քարոզչության ֆիլմեր դիտելով, ապա նաև արևմտյան ֆիլմերով հմայվելով: Կինոն դառնում է պատուհան դեպի ավելի մեծ աշխարհ, նոր իրականություն: Խորհրդային կինոն ու գրականութ-

յունը («Վասյակ Տրուբաչովը», «Ծերունի Խոտտաբիչը», «Մոլոդայա գվարդիան») հանդես են գալիս որպես մանիպուլատիվ միջոցներ, որոնք ժամանակին ձևավորել են ոչ թե անհատական մտածողություն, այլ իշխող քաղաքական ուժից պարտադրված կոլեկտիվ, գաղափարական ինքնություն, և որոնք հընթացս քայքայվում են՝ փոխարինվելով «Ռոբինզոն Կրուզոյով», «Երեք հրացանակիրներով», «Խաչագողի հիշատակարանով», Փարաջանովի ֆիլմերով: Պողոսի հիշողությունները կինոյի մասին՝ սկսած Անտոնիոնիի «Խավարում»-ից մինչև «Նռան գույնը» կինոնկարի վերապրումը, ներկայացվում են ոչ թե իբրև գեղագիտական փորձառություն, այլ որպես ինքնության որոնման փաստ:

Միջտեքստային հղումներ ունեն նաև վեպի ենթավերնագրերը: Վեպի երրորդ կանգառի «Խորհրդավոր ընթրիք» միստիկ ենթավերնագիրն ակնարկում է Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքը իր տասներկու աշակերտների հետ՝ նկարագրված են Նոր Կտակարանում: Այդ ընթրիքի ժամանակ Հիսուս Քրիստոսը կանխագուշակում է ողջ աշխարհի ապագա ճակատագիրը և իր աշակերտներից մեկի դավաճանությունը, որը, ինչպես հետո պարզվում է, Հուդան էր: «Պողոս-Պետրոս» վեպում «խորհրդավոր ընթրիքը»՝ «Տեր և տիկին Տիրատուրյանների կազմակերպած փոքրիկ խնջույքը, եղավ այն խցանը՝ աղմուկով դուրս թռած, որը շփից բաց թողեց քնած դներին» (Գրիգորյան, 2019: 286): Այն հետագայում ճակատագրական է դառնում Մովսես և Արշալույս Տիրատուրյանների, Սիրունի և Սերգոյի, ինչպես նաև նրանց հետագա սերունդների համար՝ վերածվելով կերպարների վերջին միասնականության, ճակատագրերի կործանման խորհրդանշի:

Միջտեքստայնության նշանային հարթությունում է հինգերորդ կանգառի՝ «Տե՛ր, դու մեզ փրկիր բարեկամից» աստվածաշնչյան ենթատեքստ ունեցող ենթավերնագիրը, որտեղ աղոթքի վերաձևակերպմամբ ներկայացվում են «ազգամիջյան բարեկամության» հետևանքները: Այս կանգառի պատմությունն սկսվում է աստվածաշնչյան առասպելի արդիական վերընթերցմամբ և պատերազմը վերապրող փոքր երեխայի՝ Արեգի սպասումով: Արեգը մանկություն չունեցող երեխա է, որի մայրը մահացել է նրան լույս աշխարհ բերելիս: Տղան, ազդվելով պապի պատմած Նոյի առասպելից, շարունակ սպասում է աղավնուն, որ պիտի բերեր խաղաղություն և ըստ այդմ էլ՝ մորը՝ երկնքից, հորը՝ Արցախից, սակայն աստվածաշնչյան պատմությունը խաթարվում է՝ մանկական հիշողության և ընկալման մեջ դաջվելով որպես իրական իրադարձություն, ոչ թե առասպել: Խաղաղության ավետաբեր աղավնու փոխարեն գալիս են ագռավներ. «... եկավ ոչ թե աղավնին, այլ ագռավների մի ամբողջ երամ... բներ հյուսեցին փողոցի ծառերի վրա» (Գրիգորյան, 2019: 431): Ագռավները խորհրդանշում են պատերազ-

մական իրականությունը, իսկ նրանց հյուսած բները՝ պատերազմի հետևանքները: Քրիստոնեական հույսի փոխարեն գրանցվում է բարոյական դատարկություն:

Ինքնավերլուծությունը (self-reflexivity) պատմագրական մետագեղարվեստականությանը բնորոշ հաջորդ հատկանիշն է, որը բացահայտում է գեղարվեստական տեքստի ստեղծման ընթացքը՝ շեշտելով պատմական նյութի ընտրողականությունը, փաստերի մեկնաբանելիությունը և նույնիսկ պատմական աղբյուրների անհուսալիությունը, ինչի շնորհիվ ընթերցողը գիտակցում է, որ պատմությունը ձևավորվում է ըստ այն պատմողի, որն այն ներկայացնում է: Այսպես, իր կենդանության օրոք խորհրդային իշխանություններին ջանասիրաբար ծառայած Մովսես Տիրատուրյանի գնդակահարությունը, ապա նրա հետմահու արդարացումը ցույց են տալիս նույն իշխանության վերաբերմունքը նույն իրողության նկատմամբ՝ միաժամանակ բացահայտելով պատմության կառուցման մեխանիզմները և դրա մեկնաբանման հարաբերականությունը. «...ասել է թե ամեն ինչ կարգին է, անուղղելի ոչինչ չի եղել, փա՛ռք խորհրդային իշխանությանը, ձեզ էլ, Տիրատուրյան մայր և որդիներ, լիաբուռ հրճվանք, գոհացում» (Գրիգորյան, 2019: 347): Այս հեզնական մեկնաբանությունը ցույց է տալիս, որ հետմահու արդարացումը իրականության պատկերն է, բայց ոչ իրականությունը. այն չի կարող ամոքիչ լինել ո՛չ գնդակահարության դատապարտվածի և հետմահու արդարացվածի հիշատակի, ո՛չ էլ նրա ընտանիքի անդամների համար. այն ընդամենը սիմուլյացիա է: Ընդ որում, Մովսեսը մեկն էր այն հազարավոր քաղաքացիներից, որոնք արժանացել են խորհրդային ղեկավարության վստահությանը, պատժին, հետո՝ արդարացմանը:

Հատկանշական է պատմության պատասխանատվության համակողմանի ներկայացումը. խորհրդային քաղաքական բռնությունների ողբերգական ազդեցությունը անհատի ճակատագրի վրա ներկայացնելուն զուգահեռ հեղինակը պատկերում է այդ քաղաքականության հայ կամակատարներին, որոնք իրենց դաժանությամբ հաճախ գերազանցում էին նույնիսկ իշխանությանը: Նման անձանցից է Անաստաս Միկոյանը: «Շշուկով ասվում-խոսվում է, որ ընկեր Միկոյանը դիմել է Մոսկվա՝ խնդրելով ավելացնել գնդակահարությունների՝ Հայաստանի լիմիտները, և նրան ընդառաջել են» (Գրիգորյան, 2019: 295): Հաթչոնը շեշտում է, որ հետմոդեռնիստական պատմագրական մետագեղարվեստականությունը, ի տարբերություն դասական, ռեալիստական պատմավեպի, ժխտում է անբեկանելի հերոս-գոհ երկճյուղումը և փոխարենը առաջ է քաշում հարաբերականության և ինստիտուցիոնալ համատեքստի հարցեր, ինչը նկատվում է նաև Վ. Գրիգորյանի վեպում. ««Հայաստանի ժողովուրդը երբեք չափի մոռանա Միկո-

յանի՝ իրեն ցույց տրված մեծ օգնությունը»: Շնորհավորանք, օգնություն... Կարծես թե պետք է հրճվել, ինչո՞ւ է ինքը նստել ասես ծեծ կերած» (Գրիգորյան, 2019: 294): Նույն պարբերության մեջ մեկտեղելով երկու դարաշրջանների՝ XX և XXI դարերի տարբեր իրողություններում (խորհրդային իշխանություն և անկախ հանրապետություն) ապրող երկու սերնդի ներկայացուցիչների մտորումները պատմական նույն փաստի շուրջ՝ հեղինակը փորձում է ակներև դարձնել բուն իրողության ընկալման բնույթը: ԽՍՀՄ քաղաքացի Մովսես Տիրատուրյանը հոգեկան պայքարի մեջ է, երբ կարդում է «Բզվեստիա»-ի հրապարակումները Միկոյանի «մեծ օգնության» մասին՝ փորձելով ըմբռնել սեփական ժամանակի կեղծիքն ու բռնաճնշումների բնույթը: ՀՀ քաղաքացի Պողոս Տիրատուրյանը նույն անցյալը վերաիմաստավորում է՝ համադրելով փաստաթղթային վկայությունները և իր վերապրածի վերլուծությունը: Ժամանակի հոլովությամբ «Բզվեստիա»-ն իր հերթին ստանձնում է կեղծ-պատմագրի դեր՝ վերաշարադրելով իրականությունը իշխանության պահանջին համահունչ: «Լիմիտ»-ի գաղափարը վերածվում է սիմուլյակրի: Այն «աբսուրդ» է հնչում Մովսեսի համար, սակայն ապագայից խոսող Պողոսը հաստատում է՝ լիմիտներն իրական են եղել: Տեքստային այս հնարքը բացահայտում է նաև պաշտոնական լեզվամտածողության՝ լեզվի դերը. այն կարող է նույնիսկ սպանությունները ներկայացնել որպես դրական անհրաժեշտություն: Պողոսը՝ որպես հետագա սերունդ, փաստերի և վկայությունների միջոցով փորձում է հասկանալ այդ իրականությունը՝ ոչ միայն որպես քաղաքական անցյալ, այլև որպես մեղքի, պատասխանատվության և ժառանգության անձնական հարթություն: Սա ինքնության փնտրտուքի և վերակառուցման յուրօրինակ փորձ է, որը կատարվում է անցյալի վերաիմաստավորմամբ:

Պատմագրական մետագեղարվեստականությանը բնորոշ մյուս հատկանիշը *պատմության նկատմամբ քննական հայացքն* է: Խնդրո առարկա վեպում այդ հայացքը հիմնականում ներկայանում է հերոսներից Մեսրոպ Վարդապետի հեղինակած «Քննական պատմություն հայոց» երկի և «Հետադարձ հայացք» գաղափար-կերպարի միջոցով: «Քննական պատմություն հայոց»-ի ընթերցումը դառնում է ճանաչողական ճամփորդություն, որը կատարում է պատմական հիշողությունն ակտիվացնելու, պահպանելու և փոխանցելու գործառույթ: «Հետադարձ հայացքը», լինելով անցյալը վերաիմաստավորելու, քննադատելու և գնահատելու գաղափարական գործիք, «արխիվային չարախինդ անողորմությամբ» է վերաբերվում անցյալին՝ մերկացնելով պատմության կեղծիքը և պահանջելով ազնիվ ու ամբողջական պատմություն՝ առանց հարթեցումների կամ քողարկումների: «Ինչ-նե, ինչքան էլ դեսից ու դենից տեղեկություններ գան, չեն կարող չափվել Հե-

տադարձ հայացքի հետ, որը արխիվային չարախինդ անողորքությամբ տասնամյակներ շարունակ անհավանական թվացածը մատուցում է երկուսին երկու գումարելու և չորս ստանալու անվիճելիությամբ» (Գրիգորյան, 2019: 148): Սակայն միննույն ժամանակ Լ. Հաթչոնը նշում է, որ պատմությունը հետահայաց քննելիս մենք այն տեսնում ենք ներկայի տեսանկյունից, այսինքն՝ *պատմությունն այլևս օրյեկտիվ չէ, այլ գրեթե գեղարվեստական դիտման արդյունք է*: «Հետադարձ հայացքը» այստեղ հանդես է գալիս որպես պատմության վրա վերահսկողություն հաստատող գիտակցության մարմնացում, որը հիմնավորում է պատմության հեղինակի մետահայացքը անցյալի վրա:

Պատմագրական մետագեղարվեստականությանը բնորոշ մյուս հատկանիշը *պատմական փաստերի և հորինվածքի միաձուլումն* է, որը վերադարձնում է Սարդարապատի հաղթանակի, Կարսի անկման և պատմական այլ հայտնի փաստերի քննական վերլուծության ժամանակ: Պատմության պատճառահետևանքային վերլուծությունների լաբիրինթոսում խարխափող Վարդապետի մտքում հարց է առաջանում՝ «ինչպե՞ս պատահեց, որ Սարդարապատի հերոսը՝ գեներալ Փիրումովը, այդքան անճարակ եղավ Կարսում» (Գրիգորյան, 2019: 180): Պատասխանը տալիս է հեղինակը. Սարդարապատում Փիրումովը և մյուս բոլոր ռուսահայ սպաները, որ հայերեն չէին խոսում, կոչվում էին իրենց հայրենիք Ռուսաստանի թշնամու դեմ, իսկ Կարսում ռուսն ու թուրքը, ըստ նաև հայերի կողմից ստորագրված «Հույժ գաղտնի» փաստաթղթի, բարեկամացել էին, բարեկամի վրա գենք գործածելն արգելված էր, «զինվորներն էլ, ելած ծոցից մի ժողովրդի, որը սերնդեսերունդ մի բան է տեսել՝ ռուսական իշխանություն, այդ իշխանության վերադարձին էին սպասում» (Գրիգորյան, 2019: 180): Այս հատվածում հեղինակը ոչ միայն վերաշարադրում է պատմության կոնկրետ դրվագը, այլև փաստերի հետահայաց վերլուծությամբ փորձում է բացահայտել դրա ստեղծման, ձևավորման պայմաններն ու գաղափարական ենթաշերտերը: Կարսի անկման պատմությունը հեղինակն ավարտում է՝ սարկաստիկ ոճով գովաբանելով բոլշևիկներին, որոնք հայկական բանակի և Հայաստանի Հանրապետության պարտության հաշվին կարողացան հաստատել խորհրդային կարգեր՝ ի վնաս հայ ազգի:

Պատմական փաստի և հորինվածքի միաձուլման մեկ այլ օրինակ է Մովսեսի դատավարության և գնդակահարության արձանագրությունը, որի տեքստային շարադրանքը ձևով ու լեզվով ամբողջովին համապատասխանում է ստալինյան ռեպրեսիաների «Տրոյկա»-ների հայտնի դատավճիռներին և ձևակերպված է պաթոսով, գաղափարական շեշտադրումներով ու կաղապարներով հարազատ է ՆԳԺԿ-ի նմանատիպ փաս-

տաթղթերին, ներկայացնում է պատմական վավերական փաստաթուղթ, որը ժամանակին կազմվել է շատերի համար. «Մեղադրյալը դեռ պատանեկան հասակից եղել է դաշնակցական, հակահեղափոխական գաղափարների կրող...» (Գրիգորյան, 2019: 344): Մեղադրական եզրակացությունն ամբողջությամբ ոչ միայն պատմական լեզվի իմիտացիա է, այլև Հաթնի տեսակետից՝ «պատմագրական հեգնանք», որը բացահայտում է պատմության մեջ իշխանական դիսկուրսի վերանշակման գործընթացը: «Պատմագրական հեգնանքի» դրսևորում է նաև իբրև Մովսեսի դատապարտման հիմնական փաստ նրա գրած վերջին քառատողը ներկայացնելը. «Ես մի քիչ ուշ ծնվեցի,/ Կմեռնեմ քիչ շուտ,/ Երկու քարի արանքում/ Մառախուղ է, մուր» (Գրիգորյան, 2019: 342): Քառատողի ընդգրկումը՝ որպես դատապարտման փաստ, ներկայացնում է, թե ինչպես էր խորհրդային համակարգը վախենում ստեղծագործական ցանկացած ազատ մտքից: Հեղինակը վեպի տվյալ հատվածն այդպես է կառուցում՝ ցույց տալու, որ հենց այդ վախին են զոհ գնացել Չարենցը, Բակունցը և այլք:

Պատմագրական մետադեդարվետականության մյուս հատկանիշը *տիպական հերոսների և պատմական անձանց վերաիմաստավորումն* է, երբ պատմության կամ դասական պատմագրության հերոսը կերպարային այլ զարգացում է ստանում: «Պողոս-Պետրոս» վեպում նման կերպար է Ներսես Աշտարակեցին, որ թեև պատմականորեն ունի ազգանվեր գործչի նկարագիր, սակայն այս վեպում ներկայացված է երկակի մոտեցմամբ. նա միաժամանակ *լուսավորչական գործիչ է*, բայց նաև՝ *ռուսամետ քաղաքականության հնազանդ կրող*՝ սրտի վրա սուրբ Աննայի շքանշանը՝ նվաճողի պարտադրող պարզև: Հեղինակը հոգևոր իշխանության թուլացման և պառակտման ընթացքը ներկայացնում է իրադարձությունների հետևյալ շղթայով. Եփրեմ Ձորագեղցու նշանակումով ամրապնդվում է Ռուսաստանի ազդեցությունը հայոց հոգևոր դաշտում, կաթողիկոս ընտրելու՝ հայ ժողովրդի իրավունքը փոխանցվում է ռուսաց ցարին, Ներսես Աշտարակեցու և Աբաս Միրզայի հովանավորությամբ տեղի է ունենում Էջմիածնի «ռուսականացում»: Ներսես Աշտարակեցու հիասթափությունները հետագայում հանգում են լուռ համակերպման:

Վերաիմաստավորվող գաղափար-կերպարներից է Պավլիկ Մորոզովը, որի հերոսացման խորհրդային միջոց քայքայվում է պատանի Պողոսի և Պետրոսի միջոցով: Տղաները, որոնք որոշել էին հետևել Պավլիկ Մորոզովի օրինակին և մատնել մորեղբորը՝ «Ամերիկայի ձայն» լսելու համար, «պլաններ կազմելուն», «շքախումբ ձևավորելուն», «հերոսացման սցենարներ քննարկելուն» զուգընթաց՝ սկսում են գիտակցել սեփական բարոյական հակասությունները՝ «սիրում էին մորեղբորը...»: Պատմությունը անհատա-

կան բարոյական դիլեման հակադրում է պետական քարոզչությանը՝ քայքայելով խորհրդային հերոսի կերպարն ու նրա «հերոսացված» արարքի գաղափարը: Հեղինակը ստեղծում է մետահարթություն՝ ներկայացնելով, թե ինչպես է ձևավորվում պատմությունը, և թե ինչպես են երեխաները հայտնվում պատմության և քաղաքականության խաչմերուկում: Խորհրդային քարոզչության քայքայման վկայության մյուս օրինակը Գորբաչովի վերականգնման առիթով Պետրոսի անեկդոտն է՝ «գեմոկրատիայի և դեմոկրատիզացիայի միջև նույն տարբերությունն է, ինչ կանալի և կանալիզացիայի»: Պողոսը այլևս Գորբաչովին անունով չի հիշատակում, այլ «փարիսեցի» է անվանում՝ բացահայտելով քաղաքական առաջնորդին՝ իբրև կեղծ բարեպաշտության մարմնացում, որի թողտվության պայմաններում տեղի են ունենում Սումգայիթի ջարդերը: Գորբաչովի կեղծ «կասկածները», Յագովի «գթասրտությունը», Քաղբյուրոյի նիստի «քաղաքակիրթ» տոնայնությունը չեն վերացնում ջարդի փաստը, այլ ընդամենը մանիպուլյատիվ դիսկուրսի հիմք են դնում. «Նիկոլայ ցարը հայության զարթոնք ապրող ազգային գիտակցությունը խեղդելու համար 1905-ին հղացավ Բաքվի ջարդերը՝ ոտքի հանելով «խուժանին»... Վերակառուցում հռչակած Փարիսեցին... Ղարաբաղի ազատագրական ձգտումներն է խեղդում նույն «խուժանով»» (Գրիգորյան, 2019: 388): Պողոսի հիշատակած պատմական զուգահեռները՝ 1905-ի Բաքվի ջարդերից մինչև 1988-ի Սումգայիթի կոտորածները, ներկայացվում են իբրև գաղափարական նույն մոդելի տարբեր դրսևորումներ: Պատմությունն ընկալվում է որպես կրկնվող բռնության սցենար՝ նույն հեղինակներով, բայց փոփոխվող կատարածություններով: Հայտնի ասացվածքի հեգնական վերաձևակերպմամբ հերոսները եզրակացնում են. «Կարմիր Մոսկվան կաշին չի փոխում»:

Վեպի վերջաբանն անավարտ է. գործողությունը տեղի է ունենում անցումային պահին՝ գիշերվա ավարտին՝ լուսաբացին: Հեղինակն ստեղծում է տարածաժամանակային երկիմաստություն՝ ընթերցողին տանելով 5-րդ փողոց և վեպն ավարտելով երազային դրվագով ու սյուժետային անորոշությամբ: Ըստ Լ. Հաթչոնի՝ հետմոդեռնիստական պատմագրական վեպերն ունեն «ավարտի մերժման» հակում. մշտապես ձգում են անորոշությունը՝ մղելով ընթերցողին կենտրոնանալու ոչ թե իրադարձությունների լուծման, այլ ընթացքի վրա, իսկ երազը գեղարվեստական հարթակում պատմության հնարավոր ապագայի հղացումն է:

Այսպիսով՝ պատմական նյութ ներկայացնելով հանդերձ՝ «Պողոս-Պետրոս» վեպը ժանրային առումով դասական պատմավեպ չէ: Այն հետմոդեռնիստական երկ է, որտեղ առկա հաթչոնյան վերը քննարկված պատմագրական մետագեղարվեստականության տարրերն այն դարձնում են

մետապատմավեպ: Վեպում նկարագրված են պատմական փաստեր, բայց միննույն ժամանակ խախտված են ռեալիստական կանոնները: Պատմությունը կառուցված է բազմաձայնությամբ, որտեղ տարբեր սերունդների, սոցիալական խմբերի և սեռերի ձայները միահյուսված են պատմության նույն դաշտում: Պատմական փաստերի ներկայացման ձևը երբեմն առաջ է բերում է նոր իմաստների և իրողությունների դաշտ: Հաջորդը նշում է, որ այս մոտեցումը թույլ է տալիս խուսափել դասական պատմագրության «մեկ ճշմարտություն» մոդելից և փոխարենը ներկայացնել պատմությունը որպես մշտապես փոփոխվող նարատիվների ամբողջություն:

«Պոդոս-Պետրոս» վեպում Վ. Գրիգորյանը ոչ միայն փոխանցել է պատմական ճշմարտություններ ու փաստեր, այլև այդ փաստերի համատեքստում պատկերավոր ներկայացրել է մեր նախնիների ապրածն ու զգացածը՝ ստեղծելով վեպ-էպոպեա, որը պատմում է անցյալի մասին ոչ թե որպես բացարձակ ճշմարիտ ու անվիճարկելի «իրողություն», այլ ներկայացնում է այն որպես բազմաձայն պատում, որտեղ միմյանց մեջ ներթափանցում են ազգային հիշողությունը, գրական հղումները, պատմաքաղաքական դիսկուրսները և գաղափարական ու կերպարային վերաիմաստավորումները: Վեպը քննության է դնում ազգային հիշողության ճեղքվածությունը, պատմության իշխանական վերաշարադրումները, ինքնության փլուզումը ու վերակառուցման գրեթե անհնար գործընթացը:

Վ. Գրիգորյանը գործածում է մի կողմից՝ պատմական փաստաթղթի, անձնական հիշողության, պետական քարոզչության և արդի դիտանկյան համադրությունը՝ ստեղծելով պատմական «ճշմարտության» ոչ թե վերարտադրություն, այլ քննադատություն, մյուս կողմից՝ հեզնական սիմուլյակրներ, հետահայաց վերլուծություն, դիսկուրսների խաչաձևում, որոնք թույլ են տալիս ընթերցողին ինքնուրույն դիրքորոշում ձևավորելու: Ճիշտ է, վեպում իրադարձություններն այդպես էլ լուծում չեն ստանում, բայց ընթերցողին պատմության մեջ ազգային ինքնագիտակցություն ձևավորելու ու զարգացնելու հնարավորություն են տալիս: Գրողը վերամշակում է պատմության և գրականության սահմանները՝ հիշողությունը դարձնելով համազգային արժեքների վերաիմաստավորման միջավայր, իսկ հերոսների ճակատագրերը՝ բանալի ազգային ինքնության որոնման ճանապարհին:

Գրականության ցանկ

1. Աստվածաշունչ մատյան, Հին և Նոր Կտակարանների արևելահայերեն նոր խմբագրություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի Աստվածաշնչյան ընկերություն, 2017, 956 էջ:
2. **Գրիգորյան Վ.**, «Պոդոս-Պետրոս», Եր.: Անտարես, 2019, 536 էջ:

3. **Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 2-րդ, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988, 556 էջ:
4. **Ռաֆայելյան Կ.**, «Տեղապտույտ՝ ելքի հեռանկարով Վահագն Գրիգորյանի «Պողոս-Պետրոս» վեպի մասին», Գրական թերթ (վերջին մուտք՝ 04/03/2020):
5. **Տեր-Խաչատրյան Ե.**, «Վահագն Գրիգորյանի նոր վեպը», «Ազգ» թերթ, 2020, <https://www.archive.azg.am/AM/culture/2020032001> (վերջին մուտք՝ 16. 08. 2024):
6. **Տուրիշևա Օ. Ն.**, Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը, Ե., 2017:
7. **Арнольд И. В.**, Семантика. Стилистика. Интертекстуальность, СПб. Изд-во С.-Петербург, 1999, 443 с.
8. **Hutcheon L.**, "Historiographic Metafiction Parody and the Intertextuality of History" Intertextuality and Contemporary American Fiction. Ed. O'Donnell, P., and Robert Con Davis. Baltimore: Johns Hopkins University Press, 1989.
9. **Hutcheon L.**, The Canadian Postmodern a Study of Contemporary English-Canadian Fiction, 1988, Toronto, New York, Oxford, Oxford University press, 1988, 251 pages.

References

1. Bible Book, New Eastern Armenian Edition of the Old and New Testaments, Mother See of Holy Etchmiadzin, Bible Society of Armenia, 2017, 956 pages. (In Armenian)
2. **Grigoryan V.**, "Paul-Peter", Yerevan, Antares, 2019, 536 pages. (In Armenian)
3. **Tumanyan H.**, Complete Collection of Works, Volume 2, Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1988, 556 pages. (In Armenian)
4. **Rafaelyan K.**, "Wandering with the Prospect of an Exit about Vahagn Grigoryan's Novel "Paul-Peter", Literary Newspaper (accessed 04/03/2020). (In Armenian)
5. **Ter-Khachatryan E.**, "Vahagn Grigoryan's New Novel", "Azg" newspaper, 2020, <https://www.archive.azg.am/AM/culture/2020032001> (accessed 16. 08. 2024). (In Armenian)
6. **Turisheva O. N.**, Theory and Methodology of Foreign Literary Studies, Y., 2017. (In Armenian)
7. **Arnold, I. V.**, Semantics, Stylistics. Intertextuality: Moscow: Book House "LIBROKOM", 2014. 452 p. (In Russ.)
8. **Hutcheon L.**, "Historiographic Metafiction Parody and the Intertextuality of History" Intertextuality and Contemporary American Fiction. Ed. O'Donnell, P., and Robert Con Davis. Baltimore: Johns Hopkins University Press, 1989.
9. **Hutcheon L.**, The Canadian Postmodern a Study of Contemporary English-Canadian Fiction, Toronto, New York, Oxford, Oxford University press, 1988, 251 pages.

Հասմիկ Հակոբյան – Երևանի պետական համալսարանի ասպիրանտ՝ գրականության տեսություն մասնագիտությամբ: Գիտական հետաքրքրությունները՝ նորագույն շրջանի հայ գրականություն, հետմոդեռնիզմ, միջտեքստայնություն: Հեղինակ է մենագրության և վեց հոդվածի:

ORCID ID: 0009-0007-2616-6761
hasmikhakobyan1@gmail.com

Асмик Акобян – аспирантка кафедры теории литературы ЕГУ. Научные интересы: современная армянская литература, постмодернизм, интертекстуальность. Автор монографии и шести опубликованных статей.

ORCID ID: 0009-0007-2616-6761
hasmikhakobyan1@gmail.com

Hasmik Hakobyan - PhD student of the Chair of Literary Theory of Yerevan State University. Scientific interests: modern Armenian literature, postmodernism, intertextuality. She is an author of a monograph and six published articles.

ORCID ID: 0009-0007-2616-6761
hasmikhakobyan1@gmail.com